ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

01 օգոստոսի 2018 թվականի N 107-Ա

Լ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ) ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի, 37-րդ հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետի, 5-րդ և 9-րդ մասերի և հիմք ընդունելով *Լ. Նահապետյանի* անձնական դիմումը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ *(ծածկագիր՝ 66-2.1-1)* ***Լադիկ Հայկազի Նահապետյանի*** լիազորությունները *(ծառայությունը)* դադարեցնել 2018 թվականի օգոստոսի 1-ից:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի *(ծածկագիր՝ 66-2.1-1)* լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ *(ծածկագիր՝ 66-2.2-18)* ***Մանվել Սերյոժայի Պետրոսյանի*** վրա՝ մինչև քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը մրցույթի երկրորդ՝ հարցազրույցի փուլը հաղթահարած միակ մասնակցի կողմից զբաղեցնելը կամ մեկ այլ անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելը:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարությանը *(վարչապետական բաժնին)* Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել նրա գործավարությանը հանձնված նյութերի և օգտագործմանը տրամադրված գույքի հանձնման-ընդունման աշխատանքները և ներկայացնել համապատասխան արձանագրություն:

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը *(հաշվապահական հաշվառման բաժնին)* կատարել վերջնահաշվարկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թվականի օգոստոսի 01
ք. Հրազդան